ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԶԱՏԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 հունվարի 2020 թվական թիվ 1 գյուղ Ազատան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԶԱՏԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 24-Ի ԹԻՎ 1 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի դրույթով՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ազատանի համայնքի ավագանին՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է

Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ազատանի համայնքի ավագանու 2020 թվականի հունվարի 24-ի թիվ 1 հերթական նիստի օրակարգը՝

1. «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ազատանի համայնքի 2019 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը հաստատելու մասին»
2. «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ազատանի համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 17-ի թիվ 54-Ն որոշման մեջ լրացում և փոփոխություններ կատարելու մասին»
3. «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ազատանի համայնքի 2017-2021 թվականների ինգամյա զարգացման ծրագրի իրականացման վերաբերյալ 2019 թվականի հաշվետվությունը հաստատելու մասին»
4. «Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ազատանի համայնքի վարչական սահմանում գտնվող, քաղաքացու սեփականություն հանդիսացող 08-004-0662-0006 կադաստրային ծածկագրով, 1,20 հեկտար գյուղատնտեսական նպատակային նշանակության վարելահողի նպատակային նշանակությունը փոխելու համար համաձայնություն տալու մասին»
5. «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ազատանի համայնքային սեփականություն հանդիսացող 08-004-0052-0004 կադաստրային ծածկագրով հողատարածքում գտնվող 0.99807 հեկտար բնակավայրերի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասը Հայաստանի Հանրապետությանը նվիրելու մասին»
6. «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ազատան համայնքում իրականացվելիք Հայաստանի Հանրապետության 2020 թվականի բյուջեում հայտավորվող նպատակային հատկացումների (սուբվենցիա) ծախսային ծրագրերը հաստատելու մասին»
7. «Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ազատանի համայնքի վարչական սահմանում գտնվող, պետական սեփականություն հանդիսացող 08-004-0143-0001 կադաստրային ծածկագրով հողատարածքում գտնվող 0,2000 հեկտար էներգետիկայի, կապի, տրանսպորտի և կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողերի նպատակային նշանակության, տրանսպորտի գործառնական նշանակության հողամասի նպատակային նշանակությունը փոխելու համար համաձայնություն տալու և Հայաստանի

Հանրապետության Շիրակի մարզի Ազատանի համայնքի ավագանու 2019 թվականի մայիսի 8-ի թիվ 19 որոշումն անվավեր ճանաչելու մասին»

8. «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ազատանի համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին աջակցելու հարցում համայնքի ղեկավարի կամավոր լիազորությունների իրականացմանը համաձայնություն տալու մասին»

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ազատանի համայնքի ավագանու անդամներ՝

	Կողմ (6)	Դեմ (0)	Ձեռնպահ (0)
Գևորգ Աբրահամյան			
Ավետիս Դավթյան			
Կարապետ Ենգոյան			
Անդրանիկ Իկիլիկյան			
Վարդան Մկրտչյան			
Հմայակ Պողոսյան			

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի
Ազատանի համայնքի ղեկավար՝
24 հունվարի 2020 թվական
գյուղ Ազատան

Վարդան Իկիլիկյան